

չու նոյն երեսում տպած է՝ «Ճնշէն» խորտակէն» մինչդեռ ձեռագրումն է՝ «Ճնշէն» խորտակէն»:

Վերջապէս ի զուր կն կարծումն թէ Արոյկանի լեզուն ամենայն ճշտութեամբ համապատասխանում է Բանաբեռի բարբառին. ջառում ենք որ յօդուածիս սահմանը թոյլ չէ տալիս մեզ յառաջ բերել «Վէրք Հայաստանի»-ից բաղմամբիւ բառեր, դարձուածներ և քերականական ձևեր, որոնք չեն պատահում Բանաբեռի բարբառում:

Այս փոքրիկ նկատողութիւնն այնուամենայնիւ չէ կարող արդեւք լինել մեզ համար կրկնելու, որ Արոյկանի երկերի այս նոր տպագրութիւնը մի պատուական հրատարակութիւն է, որ պատիւ է բերում թէ հրատարակչին, թէ խմբագրողին և թէ տպարանին:


Գրասէր.



Ս. ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵՆ ՏՐԻԱՏ

ԵՒ

ՆՈՅԱ ՆՈՐ ՇԱՐԱԿԱՆ ԵՆԵՐԸ.



Ի՞նչ էր Հայաստանեայցս Լուսաւորչի— սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի անքաւելի մեղքը, որին մեր սէգն Տրդատ իբրև մահապարտ ճանաչելով, ուստի և նրան չարաչար պատժելու համար բարեշէն Հայաստանի մէջ ոչ մի յարմարաւոր տեղ չգտնելով, ձգել առեց Արտաշատի անդնդախոր վիրապի մէջ: Մեր ազգային պատմութիւնների աւանդածի համեմատ ս. Լուսաւորչի այս մեծ յանցանքը, որ նոյն իսկ ինքն Տրդատ տեսաւ իւր աչքով և զարհուրեց, ահա թէ ինչ էր Սուրբն Լուսաւորչի խանաչով իւր դայեկից, որ Տրդատի հօր անմեղ յօսարովին սպանողը եղել է իւր Անակ հայրը, Լուսաւորչի բարեգործ սրտի վերայ մեծ վէրք պատճառելով իւր հօր կատարած այս մեծ անգթութիւնը, նա կամովին ձգում է իւր անձը Տրդատի արքունիքի յարկի տակ, մէն միայն հաւատարմութեամբ և միամիտ սրտով «Չհայրենեայն հատուցանել պարտիս» (Սոր. Բ. դիրք. 2.):

Սե արգարեւ երբ նա արքունիք մտած օրից իւր կամաւոր և ամբիժ ծառայութիւններով աշխատում է ջնջել իւր հօր այս ամօթալի յանցանքը և վաստակել Տրդատի սէրն, այս ժամանակ իւր և Տրդատի մէջ տեղի է ունենում մի քսամենլի դէպք, որն աւելի ծանր և ճնշիչ ներգործութիւն թողնելով նրա երկիւզած սրտի վերայ քան իւր հօր կատարած եղեռնադրժութիւնը, նա սոսկում սարսափում է, Ի՞նչ էր այս դէպքը, իւր բոլոր աշխարհով կռապաշտութեան մէջ ընկղմած Տրդատը, հրամայում է մի օր Լուսաւորչին «Պատկա և թաւ ոստա ծառոց» նուէր տանել Անահտական պատկերին՝ սպառնալով «Յաճախեմ քեզ նեղութիւնս բանտ և կապանք և մահ. . . եթէ ոչ առնուցուս յանձն դիցն պաշտօն մատուցանել» (Ագաթ, 1882, Տփ. 39—40):

Կարելի բան էր քրիստոնէական կաթով սնուած և ջրնանի եղեալ դրոց Աստուծոյ» (Անդ 33) մեր հաւատաւոր Լուսաւորչին կատարել Տրդատի արձակած այս խրոխտ հրամանը. ուստի երբ նա ամենայն զօրութեամբ մի կողմից ձգնում է ցոյց տալ Տրդատին իւր պաշտած աստուածների ոչնչութիւնը, իսկ միւս կողմից ողորջական խօսքերով հրաւիրում նրան իւր պաշտած ու պատուած յաւաքի և Աւետարանի տակ, թաւ ոստով և պատկով չպատուելով միանգամայն Անահտական պատկերին, այս ժամանակ Տրդատը ոչ այնչափ Լուսաւորչի իւր արքայական հրամանը ոտնակոխ անելու, որչափ Հայոց աշխարարչի Փառք և կեցուցիչ մեծ Անահտին» երես առ երես արհամարհելու համար, բորբոքում է մեծ սրամտութեամբ, ուստի և ի վրէժ այս բանին, չբաւականանալով նրա վերայ փորձած ամենատեսակ դաժնակսկիժ չարչարանքներով, իբրև իւր հայրենի աստուածներն անարգող մահապարտ, հրամայում է ձգել նրան Արտաշատի վիրապի մէջ: Ահաւասիկ այս էր Լուսաւորչի մեղքը: Բայց երկար մնաց նա այս դժնդակ արգելարանում, այո՛, տասն և հինգ երկարաձիգ տարիներ ևս նա իւր անձը տրորելով այստեղ, ապա Աստուծոյ անսահման ողորմութեամբ և սնօրէնութեամբ նոյն իսկ իրեն վերայ աղետալի

տառագանքներ և փորձութիւններ անձրեւող Տրդատի ձեռքով աղաւտելով այս դժնդակ վայրից, յետ այնորիկ ի արիտուր Տրդատի իրեն ընձեռած մեծ զթութեան և բարերարութեան՝ իւր Վիրապն ընկած և ազատուած օրինակով ձգում հանում է նրան և իւր բովանդակ աշխարհին մարդախանձ կռապաշտութիւնից. և այսպէս Տրդատին իւր ազգուտակով և նրա արքունական բանակից «աւելի քան զչորեքհարիւր բիւր» մարդիկ նփրատի ականակիր ջրով մկրտելուց յետոյ, ապա ինքն սուրբն Լուսաւորիչ և Տրդատ ձեռք ձեռքի տուած քանդում կործանում և վերացնում են ամեն տեղից մեհեանք, բազինք և նոցա պիղծ պաշտամունք և պաշտօնեայք, արձանացնելով կանգնելով ամեն տեղ փրկչական ամենազօր Մայր, ոչ պակաս փոյթ տանելով նաև մեր դեռահաւատ աշխարհի գաւակների մտաւոր կրթութեան, որի պարագլուխը շատ անգամ հանդիսանում էր ինքն ուսումնասէրն Տրդատ. «Տայր հրաման թագաւորն Տրդատ յաշխարհաց և ի գաւառաց բաղմութիւն մանկրուոյ ածել յարուեստ գպրութեան . . . որ և անդէն յական թօթափել . . . աւետարանաժառանգ լինէին» (Անդ 484):

Ահաւասիկ երկու անզուգական բարերարներին այսպիսի շնաշխարհիկ գործերն էին պատճառ, որ մեր ազգի շատ հանձարու շատ զաւանդների ականջին երբ հնչել են նոյա անունները, նոքա լցուել են այլ իմն ոգևորութեամբ և ապա մեծ հասարակութեամբ իւր գանձով, մէկն իւր շարականով աշխատել է անմոռանալի պահել նոցա բարերար անունը և մեծագործութեան յիշատակը մեր Ազգի և Նկեղեցւոյ մէջ:

Սուրբ Կրիզորի և Տրդատի տօները անուանն նուիրուած այսպիսի անմահ յիշատակներ պարունակող երգերի թուում, ահաւասիկ «Արարատի» միջոցաւ ի լոյս ենք հանում մի քանի գեղեցիկ շարականներ, առնելով Մայր Աթոռին 1588-մէ և 1603-Լի ձեռագիր և անթուական Շարականներից, որոնցից մէկը (1588)՝ գրել է մի ոմն Սարգիս

երէց, իսկ միւսը (1603) մի ոմն Առաքել, ուստի և մենք առանց այդ թուահամարները կրկնելու, գրութեանս ընթացքում կը կոչենք Սարգսի և Առաքելի Շարական: Իսկ թէ ով է Լուսաւորչիս և քաջագործ Տրդատի այս պատուական շարականների հոչակաւոր հեղինակը, ահաւասիկ մեր քաղաք տեղեկութիւնները:

Սարգիս երէցը իւր փարթամ Շարականի մէջ զասաւորել է հին շարականները կրօնատ գրութեամբ, իսկ նորերը բաց ձևով, այսինքն, բառերը ամբողջ ամբողջ գրած. և նա նոր է համարում և բաց գրում Սերսէս Ծնորհալու և նրա յաջորդների բոլոր գրուածները, նոր համարելով մինչև անգամ Ծնորհալու գրած Մեծի պահոց կիւրակէից բոլոր Օրհնութիւնները իրենց լծորդ շարականներով՝ անելով «Ով պատվեալը յաստուծոյ թէ զաղցից կիրակեցս զնորերն զիտես, զՏեառն ներսիսի երգեալն. նա ասա զամէն մէկ կարգաւ յիւր տեղն» թղ. 230^բ:

Սարգիս երէցը իւր այս ընտիր շարականի հետ գրել և կաղմել է նաև մի Տօնացոյց և հին ու նոր շարականների հեղինակների մի Յուցակ.՝ ուստի ասում է նա Լուսաւորչի երկու տօների ժամանակ երգուելիք շարականների մասին իւր Տօնացուցում «ԳԾ. սրբոյն գրիգորի ելն ի վիրապէն. հցն. զնորն ասա. Եւ թէ ոչ. Որ առաքեցեր.՝ ի Սահմի տանն: ԾԲ. Տաւն սրբոյն գրիգորի. հցն. Որ առաքեցեր զս. Եւ թէ զիտես զնորն. ի Տրէի. Ժ.՝ թղ. 224^ա:

Արդ՝ բանալով իւր գրած հեղինակների ցուցակը, Սարգիսը հանում է մեր աչքի դիմաց այդ նոր շարականների պատկառելի հեղինակին, «Եւ զսուրբ գրիգորին զնորերն Տէր ներսէս կաթողիկոսն Կլսեցին ասաց» թղ. 222^ա:

1. Այս ցուցակի մէջ երբևէ վերջին շարական գրող երեւում է Գրիգոր կաթողիկոս Անաւարզեցին, որը նստեց կաթողիկոս 1294 թուին, եւ մեռաւ 1306-ին (Չամ. Պատ. Լատ. 9. 289, 309): Հայրապետիս գրած քաղմաթիւ շարականներից (տես «Սիսուան» 242) գտնուում են Սարգսի Շարականի մէջ միայն երկու հատ— «հիման առաքեալսն» եւ «Յերբս անմինս քաժանեալս»:

2. Լուսաւորչի բժ. հոց-ը, որը երբևէ հնագոյն շարական, դրուած է Սարգսի Շարականի մէջ կրօնատ գրութեամբ:

1. Շարականնս մանրամասն նկարագրութիւնը տես մեր յօդ. 1894. Մարտ «Արարատ»:

Սրատարով որոնելով Սարգսի Շարակահերնի մէջ Ներսէսի գրած սրբոյն Գրիգորի «զնորներն» որոնցով տօնում էին նրա «Են ի վիրապէն» որ պատահում է ամառ ժամանակ և սովորաբար Յունիսի մէջ, զանում ենք բաց գրութեամբ —

Ճարգ. սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. Աւրնութիւն:

- Վր. Սասկալի տեսիլ աստուածային. 1
- Վր. Ի հաւրէ զարգարեալ հայրական.
- Վր. 4. Որ ի հաւրէ առաքեալ արեգակն. 2
- « Որ կոչեցեր զհեռացեալքս ի հարսա.
- « Այսաւր զիմանալի լուսոյն ծագաւդն.
- « Վ. Այսաւր տաւնէ եկեղեցի ուրախ.
- « Վ. Կ. Անձառելի շնորհաւք տուար զաւակ.
- Վր. Ով երջանիկ սուրբ Գրիգոր քաջ և. 5

Իսկ Ներսէսի գրած սրբոյն Գրիգորի «զնորներն» որոնցով կատարում էին նրա մեծահռչակ «Տաւնը» կամ նրա «Մուսն ի վիրապէն» որը ընկնում է Մեծի պահոց Զրդ Շարաթ օրը սոքա էլ ամբողջովին զանում ենք Առաքելի Շարականի մէջ՝ այսպէս:

Շարաթ աւր Գրիգորի Լուսաւորչին:

- Վր. Որ յանձառելի փառաց միածին ծա.
- + Յնձա այսաւր եկեղեցի հեթանոսաց.
- 4. Որ ի հաւրէ առաքեալ արեգակն ար. 4
- « Որ կոչեցեր զհեռացեալքս ի հարսանիս.
- « Այսաւր զիմանալի լուսոյն ծագաւդն.
- Վր. Այսաւր տաւնէ եկեղեցի ուրախ.

Արդ՝ մի կողմ դնելով այս կարգից Լուսաւորչիս Հարցը. Ո-ան Տ-ը և Մ-կ-ը որոնք

1. Շարականիս սկզբնատառերը յօդում են—Ս ու Ր Ր Գ Ր Ր Ր:

2. Այս Հարցը իւր լծորդ Ո-ի, Տ-ի, Մ-կ-ի յետ իբրև Հարական շարականներ երգուում են այժմ, և տալգոր Շարականների մէջ դրում են Պլուզ Յունի վարդապետի գրած Այսօր զուարթացեալ արձիւնքի տակ:

Բազմաթիւն 4. Գ. Աւետիքեան հետեւելով յետին Պարթի մէջ շարականների հնդիականների Յուցակ պատրաստող գործնործին, այս մի խումբ շարականները ըստայում է Մով. Խորենացուն, սակայն ո՞ր մեծ զանազանութիւն գտնւում շարականներին և խորենացու գրածները մէջ ասում է, «Ասանոր օղեալ հարցն ևս այլ լծորդ իւր գլխին շարուց ո՞՞ս առաւել յնցեանս քերնս, քան զխորենացոյն: Գործակ ինչ ըստայէ ներսի Շնորհաւոյ»: Բաց. Երկնց. 99—200:

5. Երեւի ծառու.

4. Տես 2 ծանօթութիւնը:

ինչպէս տեսանք ըստ վկայութեան Սարգսի և Հ. Աւետիքեանի ձեռքն հասած մի օրինակի՝ որ «ընծայէ Ներսէսի Շնորհաւոյ» բայց թէ մնացած երկու կտոր մեզ անձանօթ օրնութիւնը: որոնք չկան Սարգսի Շարականի մէջ, զրեւ է արդեօք Շնորհաւին: Այս հարցը կամ լաւ ևս ասել տարակուսանքը մենք լուծում ենք հետագայ երեք ապացոյցներով. 1. Սրբոյն Գրիգորի տօնի առթիւ գրած՝ Սարգսի Տօնացուցի և Առաքելի Շարականի յարեւրման յիշատակութիւնով՝ ինչպէս տեսանք վերը: 2. Սարգսի ցուցակով ուր երբ թուում է նա Ներսէսի գրածները՝ Ներսէսի իւր ձեռքը չհասած շարականների մասին վշտագին սրտով ասում է: «Եւ այլ բազումս զոր ոչ գտի» արդ՝ այդ «բազումս» շարականներից թերեւս մինն է և յիշեալ անձանօթ օրհնութիւնը. և 4. Առաքելի Շարականի հնութիւնով: որը ասրբերուում է Սարգսի Շարականից հետեւեալ կերպով. Յակօր Կլայեցու «Երգեցէք որդիք սիրովն» յայտնի շարականը որ սովորաբար գրւում է ձեռագիր և տպագիր Շարականների սկզբում և վարդան վարդապետի «Ամենատուրբ երրորդութեան» յայտնի շարականը չկան Առաքելի Շարականի մէջ, մինչդեռ սոքա Սարգսի Շարականի մէջ դրուած են իրենց տեղերում և աւելացել են Առաքելի Շարականի մէջ (Երգեցէք սկզբից Ամենատուրբ վերջից) մի ոմն Մովսէսի ձեռքով Հայոց 1107 կամ փրկչական 1658 թուին հետեւեալ ծանօթ շարականների հետ նրա վերջից—Այսօր զուարթացեալ, Լերինք ամենայն Արեւելք գերարփին. Յաւուրս վերին, Ո յանսահման ծովէն, Խորհուրդ խորին, Յայս յարկ Կիւրդի հայրապետի—Մանկունքը նոր սիրովնի և սրբոյն Մինասայ—Զյիշատակ վկայից:

Այսպէս ուրեմն Առաքելը ժամանակով աւելի մօտ լինելով Շնորհալուսն քան Սարգիսը, Սարգսի յիշատակած «Սրբոյն Գրիգորի զնորներն» թերեւս գիտէր և Առաքելը որ զրեւ է սուրբն Ներսէս Շնորհաւին, և այս պատճառաւ զրեց Շնորհալու գրած վերոյիշեալ Հարցի, Ո-ի, Տ-ի, Մ-կ-ի ձախատին՝ իրրև օրհնութիւն:

Գալով քաջադործ Տրդատի շարականներին Սարգիսը ասում է իւր Տօնացուցում—«Բշ»

Տրդատա թագաւորի. Եւ աշխէն տիկնոջն. Եւ Խոսրովի դիտա. հցն. զնորն ասա. և թէ չգիտես. աւրհնեմք զքեզ Բրիստոս թգ.՝ թգ. 224 Բ :

Այս նոր շարականներն ևս Տրդատի մեզ ծանօթ «Որ գերազոյն քան զընութիւնս» յատուկ Մկ-ի հետ բաց գրութեամբ գրուած են Սարգսի Ծարականի մէջ՝ այսպէս—

Պանոն Տրդատայ սուրբ թագաւորին»

- Գ. Նր անիմանալի ասուածութեամբդ.
- Կ. Նր ողորմութեամբ քո տէր ողորմեցար.
- Զ. Թագաւոր հզաւր բաշխաւդ.
- Է. Նր գերազոյն քան զընութիւնս.
- + Հրաշափառ ծագումն ի հաւրէ. 2

Ո՛վ է արեօք և այս ընտիր շարականների հեղինակը: Սարգիսը ասում է իւր ցուցակում «Եւ մանկտի բազում շարակներ... Տէր Երեսէս կաթուղիկոնս Կլայեցին ասաց»: Այս ոճով է խօսում հին ու նոր շարականները զատող և մի անյայտ գրիչ «Եւ այլ շատ աւագ մանկտի և շարակնք. . . Տէր Երեսէս Կլայեցին հայոց կաթուղիկոնս է երգել»:

Բանալով Հ. Գ. Աւետիքեանի «Բացատրութիւն Ծարականաց» զիրքը, թէպէտ Հ. Աւետիքեան ըստ վկայութեան Կիրակոս Գանձակեցու ընդունում է որ Տրդատի «Որ գերազոյն» Մկ-ը և Թագաւորաց «Որ գերկնաւոր» օրնութիւնը գրել է Երեսէս Ծնորհային, «Պ պատմութեան Կիրակոսի՝ ասի արարեալ ի Ծնորհաւոյնս, բայց նա չգիտեմ ինչ աղբիւրների հիման վերայ ընծայում է Մովսէս Խորենացուն՝ աւելացնելով ևս՝ այլ ձեռագիր ընծայէ Յովհանու Մանգակունւոյ» (Բաց. Երկց. 115):

Արդ՝ թէ Մովսէսը կամ Մանգակունիս Թագաւորաց կարգից եթէ գրել են մի բան, սորա են—

- Գ. Օրհնեմք զքեզ Բրիստոս թագաւոր.
 - Է. Աստուած փրկիչ մեր լուր մեզ.
 - Զ. Ով երանելի և բարեպաշտ.
 - Է. Ով երանելիդ ամենեցուն,
- որոնք իբրև հնագոյն շարական, գրուած են

Սարգսի Ծարականի մէջ կրճատ ձևով. իս Երեսէսի գրածն են արդարև Թագաւորաց «Որ գերկնաւոր», որը գրուած է Սարգսի Ծարականի մէջ բաց գրութեամբ Խորենացու կամ Մանգակունու գրած Հարցի, Ո-ի, Տ-ի, Մկ-ի և Տրդատի նոր Հարցի, Ո-ի, Տ-ի, և Մկ-ի ճակատին՝ իբրև օրնութիւն, և «Որ գերազոյն» մանկունքը, որը գրուած է Տրդատի շարականների մէջ, ինչպէս տեսանք. բայց թէ Տրդատի այս նոր Հարցը, նոր Ոգորմեան) և նոր Տէր յերկնիցը Ծնորհալի հայրապետի գրչի փաստակներն են, այս մասին չունինք մի ապացոյց, բայց միայն ասել որ մի մարդ չէր կարող գրել մի տօնի Մանկունքը. առանց կանխապէս գրելու նրա Օրհնութիւնը, Հարցը, Ոգորմեան և Տէր յերկնիցը:

Հանելով մեր այս յօդուածում յաջորդաբար մէջ բերած սուրբ Ծնորհալու մեզ ծանօթ շարականները, ահաւասիկ տալիս ենք մեր ընթերցողներին միայն անձանօթները:

Սահակ Վ. Ամատունի

17 Մարտի 1897. Ս. ՂԷՊՊԻՆ.

№ 1388 - ԺԷ. ՍԱՐԳՍԻ ՆՐԷՑԻ ԾԱՐԱԿԱՆ. Թ.Ղ. 159թ:

Վարդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. Արնութիւն»

Սոսկալի տեսիլ աստուածաին հրաշիցն ի մանալի լուսոյն ի վեր քան զմիտս բարձագոյն խորհուրդ քեզ յայանեալ. որ զքեզ ընտրեաց յառաքելական յաթուռ, ո՛վ տէր սուրբ Գրիգոր:

Որ վերին տեսութեամբն աստուածաին շնորհաւք յորովայնէ ստեղծեալ, և ստացար շնորհս առաքելական հաստան աշխարհի լուսազարդ բանիւ զբանըն կենաց տրնկեալ ի մէջ յեկեղեցու:

Թիթիւ ամենասուրբ հոգւոյն ճշմարիտ հաւր և որդո փառակցի. աղբիւրաբար հոսեալ վրտակ մշտընջենարուխ վարդապետութեամբ. որով զուարճացեալ բերկրին միշտ ուրախութեամբ կեկեղեցիք սրբոցն: Թարունեացն, վեհից եւ բոլորից սրբոց եղբիւր և առաջնորդ անտանելի քո շարչարանաւք և յաւետ արխարար ժուժկալութեամբ յա

1. Թեոդոսի Թագաւորի աճ. Հարցը, որը երբևէ ճանաչուած չէր շարական, գրուած է Սարգսի Ծարականի մէջ կրճատ գրութեամբ:
2. Թեոդոսի - Ծ ա շ ու շ

անդորդս արարեր զորդիս բազումս լուսո
աստուածութեանն հաւր ընծանցեր:

Արունակ ծաղկեալ յաստուածաին արնկոյն
անմահութեան շառաւեղ մեզ շնորհեցար,
որ զհոգեւորն արբուցանես զուրախարար
բաժանն բանաւոր հաւտի քո աշակերտե-
լոցս նոր ժողովրդեանս:

Երազոյն պայծառ և բաղձալի ցուցանիւր
շնորհք քո իմաստութեամբդ, ևս առաւել
սէրն և բխտոսի ի քեզ կատարեցաւ, որ
քոին պարկեշտ վարիւք ի մարմնի՝ փայլեալ
երեւցար որպէս անմարմին զուարթուն:

Պապից ազանց մաքրութիւն և տեսակ բա-
րի բանաւոր սեռից, հոգանիւթ զորով հե-
տեւող անձառ հրաշագործութեամբ արփիա-
կերպ հրանիւթ բնութեանն երկնաւոր ան-
մարմին զաւրացն:

Բարձրագոյն կամարն վերին մբտիցն առա-
քինութեամբ քո ի յերկրէ հասեալ ժա-
մանցեր, և երկնաին ճանապարհացն գր-
տար զեղեցկապէս գնացիւք, զերս ի մտի ե-
ղբր երանել ի մարմնս ի կենցաղոյս հովտես:

Երազարդեալ արփիահարաշ վանձապէս հա-
մապաճառ շնորհք քո յաւժարութեանա-
որ զվերջինս առաւել փայլեցուցեր զհան-
դէս քաջութեամբ խաչակիր կրօնիւք՝ միշտ
մեռելութեամբ աշխարհի խաչեալ:

Պոչեալ յերկրէ և ի ստորին կենցաղոյս յա-
պականութենէ, գործակից զլով սրբոց
մարդարեիցն եղիաի և յովաննու ի զուլս
լերանց յայրս և ի ծերպս վիմաց աղաւ-
թեալ հանգեար:

Արունի ընդրեալ ճըշմարիտ հովիւ բարի և
քահանայեան աստուածաին կոչմամբն,
անկանիմ առաջի քո սուրբ նըշխարացդ
հայցմամբ բազկատարած պաղատանաւք,
յիշեալիւր զմեզ առաջի քրիստոսի, ս՛վ տէր
սուրբ զրիգոր:

Ի հաւրէ գարդարեալ հայրական շնորհաւք
ըրակեալ հայր ազգաց բազմաց սուրբրդ
զրիգոր, հաւրն երկնաւորի ճըշմարիտ պատ-
ր:

Ի յորդու առաքեալ որդիական սիրով

հարազատ՝ որդի լուսո և տուրնջեան սուր-
բրդ զրիգոր, որդւոյն աստուծո կերպարան
փառաց:

Ի հոգւոյն ընդրեցար հոգեւոր որդոց՝ լի-
նել հոգով հովանի, հասաստանեաց հայր հո-
գեւոր սուրբրդ զրիգոր, ամենասուրբ հոգւոյն
անօթ ընտրութեան:

Բազմաչարչար նահատակ յետ քրիստոսի
յոյս և ապօհն աստուածազուլթ՝ ճնաւղ
սուրբրդ զրիգոր, մեղուցեալ որդւոցս միշտ
բարեխաւսեալ:

Կ. ԵԲ.

Անձառելի շնորհաւք տուար զաւակ թա-
ղէտսի սուրբ առաքելոյն, ժառանգեցեր զհիւ-
սիս և զարեւելս՝ բնակչաւք զաւառաց մինչև
ի մուտս կաղրից աշխարհի երանելի տէր
սուրբ զրիգոր, հայր և հովիւ ազգաց և ա-
զանց, անդադար բարեխաւսեա վասն անձանց
մերոց:

Աշխատեալ մշակդ յերկրի, ապա եղար
ի խոր վիրապի, վաստակեալ ժամանակաւք
ամսոց և ամաց, վերաբերեալ սիրով ընդ քեզ
զընդրդմեալս ի խորս անդընդոց, երանելի տէր
սուրբ զր[իգոր], ճարտար բժիշկ անտաժե-
տաց և ցաւազնոտաց, անդադար:

Իշխանակից սուրբ պետրոսի և բանայի
երկնի և երկրի, սիւն ամպո ի ջմամբ միածնին
ոսկի ուռամբ ջախեր ըզգլուխըն բելիարա,
երանելի տէր սուրբ զրիգ[որ], անշարժ հիմն
և պարիսպ սուրբ եկեղեցո, անդադար:

ՅԷ.

Ո՛վ երջանիկ սուրբ զրիգոր քաջ և յայ-
թող հայրապետ, դաւանաւղ փրկչին և ա-
ռաջնորդ հաւտի ճշմարիտ արմատ աւրինա-
ցըն տեառն, որ ժուժկալեցեր առաքինու-
թեամբ համբերեալ բանդից և գելարանաց,
յայթեցեր կարեաց հոգանիւթ բնութեանս,
լոյս ջահացուցեր հասստան ազդի, հայցեալ

1. 2. — հայրազատ:
2. Լուսանցում — «արանց»
3. 2. — աստուածագոթ.
4. Հարցը, Ռ. Տ. ՄԿ. տես յօղուածիս մէջ դրած
նոյն Սարգսի Յ ա ն կ ի մէջ:
5. 2. — գարեւեալ:
6. Նրեւի — ծառու:

ղթողութիւնն ի վերնատուողէն մեզ մեզուցե-
լոցս:

Որ խցեալ շիջուցեր զմահարեր բերանս
թիւնաւոր աւձիցն ի խոր վիրապին. և ան-
ձառելի հրաշագործութեամբ երբակի հնգիւք
զթագ պարծանաց ի գովեստ փառաց անեղին
գտար. հայցեա զթողութիւնն:

Որ առանձնեա աղաւթիւք բարձրանչան
և սուրբ հաւատով ի պարթեական մեղապարտ
յազգէն ծագեալ շառաւեղ մեզ տէր սբ. գրի-
զոր. հոգեւոր և սուրբ ամպծութեամբ բլղխեալ
զցաւղ բժշկութեան զիւսպաշա ազգին առ ի
յարբուցումն աստուածգիտութեանն. հայ-
ցեա զթողութիւնն:

№ 1605—ԼԲ. ԱՌՈՒՔԵԼԻ ՇԱՐԱԿԱՆ. Թ.Ղ. 105թ:

«Մարաթ ար Գրիգորի Լուսաւորչինն»:

ԳԼ:

1Որ յանձառից փառաց միածնին² ծա-
ղեցար լոյսդ արփիական ճշմարիտ զաւակ
ի սիովն. որ յարեկից փայլեալ յազանց³ պար-
թեական և յայտնապէս հընչել⁴ զանըսկիզ-
բըն հայր՝ արարիչ բոլորից:

Որ արփիափայլ ծագմամբ երևեալ մար-
մընով ի ստոր վիրապին անհիւթ աղաւնին.
քանզի տեսեալ թանձրացեալ զանմարմինն ի
մարմնի և էտպէս փառաւորեալ զբանն կեն-
դանի⁵ էակից ընդ հաւր և հոգւոյն:

Որ լուսաղարգեալ ցուցար⁶ ի յերկրի
խկապէս վիայ պանծալի. ուստի եկեալ ի մէջ
մահարեր շընչոց կենդանեաց. և ընդհանուր
⁷ ծաւալեալ զհոգին ճշմարիտ փառակից⁸ ընդ
հաւր և որդւոյ:

9Որ զարարչականն ընկալեալ զպատուէր
քարոզել զէութիւն միածնին և երրորդութիւն
կատարեալ ի մի տէրութիւն փառաւք. և աս-

1. Բազմաշխատն է. Ալիշան այս նոր Օրմուծիմը
մուծել է իւր «Այրապատ»-ի մէջ (երես 440). 2. Ալիշանն և
Առաքելի օրինանքի մէջ կան բաւականին տարբերու-
թիւններ, որոնք և նշակում ենք, բաղդատելով միմեանց
հետ:

2. Առաքելի Օր. — Որ յանձառելի փառաց Միածն.
3. 2. Ալիշանի Օր. — ազանց,
4. . . . — նշեալ.
5. . . . — շիք — «էակից».
6. . . . — շիք — «ի».
7. . . . — փառաւորեալ.
8. . . . — շիք — «ընդ».
9. . . . — շիք — ամբողջ տունը.

տանաւր զանտեսն ի յէկց տիրապէս ծանու-
ցեալ էից:

* Յընձա այսաւր եկեղեցի հեթանոսաց
նորողել զնորս խարաէլ կոչմամբ¹⁰ զրիգորի.
զարգարեալ զեակս ի բնութիւն մարմին հո-
ղեղէն և պարտորեալ զանպարագրելին¹¹ զրա-
նըն մարմին եղեալ:

Յընձան¹² այսաւր մանկունք վերին նոր
սիովնի¹³ դուռն արեւելեան կողմանց հիւսի-
սոր քանզի տեսուչ եկեալ բանաւոր հաւտին. և
փարատել զմէզ խաւարին և զլոյսըն կենաց հե-
ղեալ ի ձեզ:

Յընձա այսաւր անմարմնոց բաղմութիւնն
միանմրելով ի բնութիւն հոգեղէն. զի անձառ-
բանն աստուած երևեալ մարմնով¹⁴ ի յերկրի
և պարտկցեալ ընդ մեծապայծառ ճրդութիւ-
նըզ խկապէս էացեալ ի քեզ:

Ահաւոր քում հրաշիւք միացար ի մարմ-
նի յանձառելի ծնունդ հայրենի. համահա-
ւաքեալքս ի տաճար սրբութեան պաղատիմք
քանզի և մեզ փառաւք ելանել ընդ¹⁵ քեզ
ով հայր վարդապետ և տէր:

* . . .¹⁶ Քաղմաղէմ՝ չարչարանօք նահա-
տակեալ յերկրի վշտօք և զելարանօք, ի ջա-
նելով ի վիրապին՝ վերաբերեալ զազգս Հայաս-
տանեայց ի լոյսն անստուեր, երանելի տէր
Ս. գրիգորի Հայր և Հովիւ աղբաց:¹⁷

№ 1588—ԺԷ. ՍԱՐԳԻՍ ԵՐԷՅԻ ՇԱՐԱԿԱՆ. Թ.Ղ. 52ա.
«Դանոն. Տրդատայ սուրբ թագաւորին» *

ՅԳ. Ը.

Որ անիմանալի աստուածութեամբը ք՝
հայր երկնաւոր և թագաւոր, ի ձեռըն սուրբ
լուսաւորչին զարքայն հասց տրդատիոս նո-
րատեղծեալ զարգարեցիկ թագաւոր. արհ-
նեալ տէր աստուած հարցն մերոց:

10. 2. Ալիշ. Օր. — սրբոյն գրիգորի.
11. . . . բանն
12. Առաքելի Օր. — ցնծա.
13. . . . — դուռն արեւելեան կողմանց հիւսիսի
14. . . . — յերկրի.
15. Առաքելի Օր. — ընդ մեզ.
16. Այս մն տուն շարականը, որ շէպ Առաքելի
նակի մէջ, ինչպէս գրութեան ընթացքից երեւում է,
շարականի սկզբնատրութիւն է. սակայն ափսոս որ լքի
17. Հարցը, Ո. Տ. Մկ. — տես յօդուածիս մէջ 98
նոյն Առաքելի Յանկի մէջ:
* Օրմ. ակ. «Որ զերկնատր թագաւորութեանը»¹⁴

Որ զատուածաստ զաւագանատ քո
Հարեր առ ի խրատ զորքայն՝ որդիս միածին.
և վերստին հաստատեցեր զաթոռ թագաւորին
մերո տրգատա. աւրհնեալ տէր. աստուած:

Որ բզփառակցին քո հաւր և որդո կա-
տարեցեր զկան հոգիտ ճշմարիտ. գրթու-
թեամբ և ողորմութեամբ լուսաւորեցեր
բղթագաւորն հաստատանեաց՝ արգանդ մաքուր
սուրբ աւագանաւն. աւրհնել. տէր. աստծ.

4. Բզտէր աւրհնեցէք բարձր արարէք ըզ
[նա յաւիտեան]:

Չամենաթագաւորն բզհայն երկնաւոր
թագաւորք երկրի ցրնծութեամբ բզտէր աւրհ-
նեցէք բարձր արարէք զնա յաւիտեան:

Չփառակից որդին ըզծնեալն ի կուսէ:
զովելով որդիք մարդկան բզտէր աւրհնեցէք.
բարձր արարէք զնա յաւիտեան:

11. Որ ողորմութեամբ քո տէր ողորմեցար
թագաւորին մերո տրգատա. և ետուր մար-
գասիրապէս շնորհս և ողորմութիւն. ողորմեա
մեզ քրիստոս անմահ թագաւոր:

Որ աստուածահն փառաւք պրսակեցեր
գարքայն ի ձեռն ճշմարիտ քահանայապետին.
և ետուր զիրաւունս արգարութեան ի ձեռնն
սորայ. ողորմեա մեզ քրիստոս անմահ թա-
գաւոր:

Որ զերագոյն շնորհաւք բարձրացուցեր
ղեղջիւր սուրբ եկեղեցո. ուրախութեամբ և
սիրով խառնեցեր զազգս մարդկան ընդ որդիս
լուսո. ողորմեա մեզ քրիստոս անմահ թագա-
ւոր:

11. Թագաւոր հըզաւր բաշխող բարութեանց,
զեկեղեցի քո անշարժ պահեա աղաչանաւք
թագաւորին քաջ և յաղթող մեծին տրգա-
տա. վասն որո և մեք աւրհնեմք զանմահ թա-
գաւորդ:

Որ զուարճացուցեր փառաւք զմեծն աշ-
խն տիկին և զաւրիորդն խոսրովիզուխտ,
զարմացուցեր տեսլեամբ հոգով զգրիգորիոս
պահել կենդանի. վասն որո և մեք աւրհ-
նեմք զանմահ թագաւորդ:

Որ ի ձեռնն ճըշմարիտ սուրբ լուսաւոր-
չին հաստատեցեր զթագաւորն մեր. որ բազ-
մաչար չարչարանաւք ի խաւարէ կռապաշտու-
թեան գարձոյց զմոյրեալքս. վասն որոյ և
մեք երզեմք ըզփառս ի բարձունս: 1

2. Հրաշափառ ծագումն ի հաւրէ, որ

պարագրեցար յերկնից յարգանդ կուսական.
նստար յաթոռ գաւթի աւծեալ թագաւոր.
շնորհեա տրգատա զաթոռ աիրական:

Հոգի հզաւր բխումն ի հաւրէ, որ աղա-
նակերպ իջեր ի յորդանանս այսաւր յերկնից
լոյս ծագեցար փայլմամբ թագաբքաամին որ-
դոյն խոսրովու:

Որ ի սպառեալ սիրո սրբութեան զաւրա-
ցան զաւակքն՝ հագարածին. իսպառ բարկու-
թեամբ սրով քո սատակեա զուրացողսն. կանկ-
նել վերստին զնշան փրկական:



Ա Չ Գ Ա Յ Ի Ն .

ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ .
ՄԱՅՐ ԱԹՈՒ .

Մեծի պահոցիս մէջ Վեհափառ Հայրա-
պետի կարգադրութեամբ քարոզ է խօսուում
կիւրակէ երեկոները Մայր Տաճարում և շա-
բաթ երեկոները կամ կիւրակէ տաւաօրը
Վաղարշապատի եկեղեցում: Առաջին կիւրա-
կէին Նորին Սրբութիւնը խօսեց Մայր Տա-
ճարում, բնարան և նիւթ բնտրելով Սայի
Մարգարէի ծն գլուխը, որի մէջ Աստուած
մարգարէի բերանով ցոյց է տալիս իւր ժո-
ղովրդին, թէ ինչպէս պէտք է պահք պահել,
որ ընդունելի լինի իրեն. այն է՝ բրդել հաց
քաղցածին, հագցնել մերկին, պատսպարել օ-
տար անտուն աղքատին, քակել անիրաւու-
թեան բոլոր կնճիռներն, հրաժարուել մարմնա-
կան ցանկութիւններից, որոնք մարդուն հե-
ռացնում են Աստուածպաշտութեան ճա-
նապարհից, այդ ժամանակ միայն մեր պա-
հած պահքը ընդունելի կըլինի: Այն պարզ
ոճովն ու զգայուն լեզուաւ, որ Հայոց Հայրիկին
միայն յատուկ են, Աստուծոյ խօսքը բացա-
րելով, Վեհ. Հայրապետն ազգու յորդորներ
կարգաց տնանկ և թշուառ գաղթականներին
օգնելու համար:

Բ. կիւրակէին խօսեց Գեր. Սուքիաս Աբբ-
եպիսկոպոսը բնարան աննելով Ս. Պօղոս Ա-
ռաքեալի խօսքը՝ «որ զհոգի Բրիստոսի ոչ ու-
նի, սա չէ նորա»: Ընդարձակելով իւր խօսքը
Նորին Բարձր Սրբազնութիւնը յորդորեց ժո-
ղովրդեան չչեղիլ աւեաարանի ճշմարիտ վար-
դապետութիւնից Բրիստոսի հոգին իւր մէջ
արձարծելով:

1. Մանկուքը — որ գերագոյնս:
2. Նրեկ — ծառու.

5. 2. զաւակն.